Ուղեցույց

Մայրենի /Ընթերցանություն/ առարկայի օլիմպիադայի ստուգման

1. Օլիմպիադայի դպրոցական փուլի մասնակիցների կատարած աշխատանքները ստուգելու համար դպրոցի տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են դպրոցի «Մայրենի», «Հայոց լեզու և գրականություն» առարկաների ուսուցիչներ:

2. Օլիմպիադայի մարզային փուլի մասնակիցների կատարած աշխատանքները ստուգում է մարզի կողմից ձևավորված «Հայոց լեզու և գրականություն» առարկաների հանձնաժողովները:

3. Դպրոցական և մարզային փուլերի աշխատանքները ստուգող հանձնաժողովն սկսում է ժամը 15:00-ից:

4. Յուրաքանչյուր դասարանի առաջադրանքը գնահատվում է 100 միավորանոց սանդղակով /յուրաքանչյուր հարցի պատասխանն առավելագույնը գնահատվում է 5 միավոր/:

5. Սխալ պատասխանի համար միավոր չի տրվում:

6. Ուղղագրական և կետադրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 0,5 միավոր:

7. Առավելագույն միավորը տրվում է, եթե՝

ա/ հարցին տրված է տրամաբանված, հարուստ բառապաշարով պատասխան՝ հարազատ մնալով գրվածքի բովանդակությանը,

բ/ կատարվել է ճիշտ բառընտրություն, նախադասությունների ճիշտ և համոզիչ ձևակերպում,

գ/ տրվել են ինքնատիպ բառապաշարով ու լուծումներով պատասխաններ:

8. Հանձնաժողովը յուրաքանչյուր մասնակցի տվյալները և գումարային միավորը լրացնում է ըստ Հավելված 1-ի, որը տրված է Excel ֆայլով /կցված է/:

Excel-ի ֆայլը լրացնելիս օգտվել օլիմպիադաների կայքերի հետևյալ հղումներից՝ https://www.olymp.am/hy/node/1151 կամ https://lib.armedu.am/article/28222 և տվյալները գրել նույնությամբ: Հատկապես ուշադրություն դարձնել դասարան /գրել բացառապես արաբական թվանշաններով, չգրել հռոմեական/ և կրթօջախ /լրացնել նույնությամբ, կարճ տարբերակով/ սյուներում լրացման ձևին:

9. Դպրոցի տնօրենը լրացված աղյուսակը էլեկտրոնային եղանակով հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է մարզպետարան /Երևանի քաղաքապետարան/:

10. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի /Երևանի քաղաքապետարանի/ վարչությունը դպրոցներից ստացված աղյուսակները ներբեռնում է մեկ Excel ֆայլում և չորս աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է ՀՀ ԿԳՄՄՆ՝ info@olymp.am էլեկտրոնային հասցեով: